

ԱԴՐԵԶԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԿԱՐԾՐԱՏՊԱՑՄԱՆ ԼԵԶՈՒՆ

Լուսինե Ղարախանյան
հ.գ.թ., դոցենտ
ԱրՊՀ, ԿԳՄՆ
Արցախ

Անոտացիա: Ծագումնաբանական առումով ֆոլկլորի կյանքի կոչած հիմնական անհրաժեշտությունը մարդկանց ինչ-որ բան հաղորդելու կամ ներշնչելու նպատակ ունի, որը, պայմանականորեն ասած նաև միսիոներական էֆեկտներ է ունենում: Այս առումով աղրբեջանական հեքիաթները նպաստում են աղրբեջանի մատադ սերնդի մոտ բացասական կարծրատիպերի ձևավորմանը: Ավելին, դրանք գեներացնում են միջէթնիկական կարծրատիպերը: Հոդվածում ներկայացվել են մի բանի աղրբեջանական հեքիաթներ, որոնց մեջ ազրեսիվ կարծրատիպերի էսկալացիան ակնառու է, մի բան, որն արդեն իսկ սերնդին ապականելու և ապակողմնորոշելու կարճ ճանապարհ է: Ազգայնամոլության սերմանման երկարատև քաղաքականությանը զուգահեռ է ընթանում մանկական գրականության միջոցով թշնամի հայի կերպարի ձևավորումն ու զարգացումը:

Բանալի բառեր- ֆոլկլոր, աղրբեջանական հեքիաթ, ազրեսիվ կարծրատիպեր, կարծրատիպերի էսկալացիա, ենթազիտակցական աշխարհ, հոգեկանի ինտեգրացիա, ուղերձ, հաղորդագրություն:

Ծագումնաբանական առումով ֆոլկլորի էությունը կայանում է մարդկանց ինչ-որ բան հաղորդելու կամ ներշնչելու նպատակ ունի, որը, պայմանականորեն ասած, նաև միսիոներական էֆեկտներ է ունենում:

Դարերի ընթացքում ֆոլկլորը, մասնավորապես հեքիաթը, արտահայտել է ազգի Ես-պատկերը և նպաստել ազգի զարգացմանը: Առհասարակ, հեքիաթը և մյուս գեղարվեստական ստեղծագործություններն իրենց նշանակալի ազդեցությունն սկսում են երեխայի շատ վաղ տարիքից: Տարբեր հոգեբանական դպրոցներ ներկայացրել են հեքիաթների իրենց մեկնաբանությունը: Հեքիաթն առանցքային նշանակություն ունի հատկապես երեխաների կյանքում, որոնք ինֆորմացիայի կամ հաղորդագրության փոխանցման յուրատիպ մատրիցաներ են: Ֆոլկլորի, մասնավորապես հեքիաթի մեջ կան ազգային մտածողություն, ազգային ինքնազիտակցություն, հոգեկերտվածքային առանձնահատկություններ: Այս առումով հետաքրքիր ուսումնասիրության նյութ են աղրբեջանական հեքիաթները, որոնց մեջ ազրեսիվ կարծրատիպերի էսկալացիան ակնառու է, մի բան, որն արդեն իսկ սերնդին ապականելու և ապակողմնորոշելու կարճ ճանապարհ է:

2015թ. Աղրբեջանի Ազգային ժողովի հովանու ներքո անցկացվել է առաջին հանրապետական թատերական փառատոնը երեխաների և երիտասարդության համար, որի հիմնական թեման եղել է հայրենասիրությունը: Բեմադրությունների մեծ մասի թեման եղել է Արցախյան պատերազմը, իսկ հիմնական կերպարը՝ թշնամի հայը: Ի դեպ, այս փառատոնին հաղթած թեմադրություններից մեկը Շ. Խելքուլյայի «Իմ թշնամական խաղալիքը» մոնոներկայացումն էր, որի հերոսն Անդրանիկ անունով խաղալիքն է» [2; 5] (Կարապետյան Շ. «Հայի կերպարն արդի աղրբեջանական մանկական գրականության մեջ. ընդհանուր ակնարկ»): Հաստ հության, խաղալիքի մեջ փորձ է արվում նսեմացնել այնպիսի մի հզոր կերպար, ինչպիսին զորավար Անդրանիկն է, և ով ժամանակին թուրքերի մոտ ահ ու սարսափ էր տարածում: Հայի կերպարի այսպիսի թշնամացումը հիմքում ունի խորը անհանդուրժողականության, հիսութերիայի հասնող ազրեսիվ հոգեբանական ինքնապաշտպանություն: Հայի՝ որպես թշնամու կերպարի ծայրահեղ վարկաբեկման օրինակներ են «Հեքիաթ Իլհամի մասին», «Վատ հարևան», «Անմեղ կինը» հեքիաթներ: [2; 5] Սովորաբար իրողությունը հեքիաթում երեխային ներկայացվում է փոխաբերությունների լեզվով: Դա երեխային թույլ էր տալիս հասկանալ իր արարքի իմաստը, նկատել սիսակները, ինչպես նաև սովորել, թե ինչպիսի այլնտրանքային ճանապարհով կարելի է լուծել ծառացած խնդիրը, իսկ ահա աղրբեջանական հեքիաթներում ամեն ինչ արվում է ուղիղ ու բաց ճանապարհով: Ավելին, մանկական աֆեկտիվ երևակայությունն առաջանում է բացասական հուզական ապրումների հետ

կապված: «Սկզբում բացասական էմոցիոնալ ապրումները երեխաների մոտ պայմանականորեն արտահայտվում են լսված կամ դիտած հեքիաթների հերոսների մեջ: Դրանից հետո երեխան սկսում է երևակայության միջոցով կառուցել այնպիսի իրադրություններ, որոնց շնորհիվ նա ազատվում է իր «Ես»-ի սպառնալիքներից»: [1; 38]

«Հեքիաթ Իլհամի մասին» մանկական ստեղծագործության հերոսը՝ Իլհամը, դրական որակների մարմնացում է, իսկ գործող հայ հերոսի կերպարը մատուցվում ու սիմվոլացվում է անհավատության ու դաժանության հետ: Իլհամը դառնում է սեփական էթնիկ հանրույթի դրական կարծրատիպերի մարմնավորում, որով, ըստ էռության, սկսվում է կերակրվել աղրբեջանցի մատադ սերնդի ինքնությունը: Ազնիվ ու տաղանդավոր Իլհամի կերպարը հակադրվում է հայի դաժան կերպարին, որով փոքրիկ աղրբեջանցին սկսում է ճանաչել ինքն իրեն ու հարևաններին: Զգիտես ինչու, աղրբեջանական մանկագիր Գյուլզար Իբրահիմովայի մտքի վայլատակումներն անմիջապես առնչվում են հային, հայի կերպարին ու հայի մտածողությանը, ու կրկին ձևավորում են բացասական կարծրատիպերը: «Իլհամի և Ֆարիզի հեքիաթը» ստեղծագործության մեջ ևս Իլհամը անմեղության ու բարության, աշխատասիրության ու արդարամտության մարմնավորում է: Բայց ահա, զգիտես ինչու, ազգությամբ ոուս Ստեփանն ու հայազգի Վալոն անխոճորեն խաթարում են նրա անխոռվ անդորրն ու հանգիստը: Այստեղ զարմանալի է, թե ինչու Գյուլզար Իբրահիմովան բացասական կարծրատիպեր է ձևավորել նաև ոուսների նկատմամբ՝ կրկին նպաստելով երեխաների մոտ ենթագիտակցորեն կանխատրամադրված դիրքորոշումների ձևավորմանը, որի հիմքում կրկին ատելությունն ու թշնամանքն են, զգուշությունն ու կասկածամտությունը, որակներ, որոնք ներոզային ֆոն են ստեղծում անմեղ մանկություն ապրող երեխաների հոգեկան աշխարհում:

«Մի օր ոուսներն ու հայերը միավորվելով՝ հարձակվում են խաղաղ բնակչության վրա ու անխնա կոտորում աղրբեջանցիներին: Զարդերի թեժ պահին Իլհամը, ով դարբին է, գտնվում է իր դարբնոցում, ուր հանկարծակիորեն ներխուժում են իր նախկին ընկերները: Նրանք դաժանաբար հանգուցալուծման են հասնում սկսած ջարդերը և սպանում Իլհամին: Հեքիաթն առավել հետաքրքիր դարձնելու համար նկարագրվում է նաև Իլհամի սիրո գեղեցիկ պատմությունը, որը դժբախտ ավարտ է ունենում կատարված «վայրագությունների» արյունքում» [2; 7] (թարգմանությունը՝ Դիանա Կարապետյանի): Այս հեքիաթում հայերին և ոուսներին վերագրվում է դավաճանության որակը, մի բան, որ հոգեբանության լեզվով կոչվում է ատրիբուտիայի պաշտպանական մեխանիզմ. ես դիմացինին եմ վերագրում այն, ինչն իրականում իմն է: Երեխան ուժեղ ապրումակցում և խորը նույնականացում ունի հեքիաթի ամբողջ ընթացքի ու առանձին հերոսների հետ, ինչի արյունում ձևավորվում է նրա գերեսը, նորմերի ու արժեքների համակարգը: «Հեքիաթը հնարավորություն է ընձեռում մտնել «կյանքի ներսը», «վերապրել մի կտոր կյանք»: Այդ ապրուների պրոցոսում ստեղծվում են որոշակի հարաբերություններ և բարոյական գնահատականներ, որոնք երեխայի համար կարևոր «պարտավորիչ ուժ» են ներկայացնում, քան հաղորդվող ու յուրացվող գնահատականները» [3; 7-26]:

Դիանա Կարապետյանը թարգմանել է նաև «Վատ հարևան» հեքիաթը, որում նույնպես թշնամու կերպարում ներկայացված է հայը: Այստեղ ևս հայի կերպարը մարմնավորող Վարդանը ներկայացվում է խաբերայի, գողի, ստախոսի, արժեքներից գուրկ մարդու և մի շարք այլ բացասական որակների համատեքսում: Վարդանի բացասական կերպարին հակադրվում է հեքիաթի մյուս դրական կերպարը՝ աղրբեջանցի Ռովշանը: Նախանձի և ատելության այրող զգացումն ի վերջո դրդում է Վարդանին ճանապարհորդության ժամանակ ոչ միայն խաբել ու թալանել Ռովշանին, այլև առանց խրճի խայթի նրան նետել ջրիորը: Լավ է, որ Գյուլզար Իբրահիմովայի միտքն այստեղ փայլատակում է, և հեքիաթը ունենում է դրական ավարտ. Ռովշանի սիրեցյալը փրկում է նրան: Հեքիաթի կոնկրետ սյուժեն և գործողությունների դրամատիկացված պատկերը նպաստում են, որպեսզի երեխան մտնի երևակայական հանգամանքների ոլորտ և սկսի մտովի ապրումակցել հեքիաթի հերոսներին: Ռովշանին ապրումակցելով՝ նրա մոտ արմատավորվում է ատելության զգացումը Վարդանի ու Վարդանի նմանների նկատմամբ:

Ռովշանի, Իլհամի կերպարների միջոցով շեշտվում է սեփական խմբի ընդհանրական դիմազիծը, գծագրվում դրական երանգավորումներով, ինչը հիվանդագին երանգներ ունի և բացասաբար է անդրադառնում աղրբեջանցի երեխաների են և մենք՝ համակարգերի վրա: Բոլոր երեք ստեղծագործություններում առկա են հայերի նկատմամբ արտահայտված ազրեսիվ կարծրատիպեր, որոնք ուժեղացնում են աղրբեջանցի երեխաների նախապաշտակածությունը: Հայի

կերպարն արդեն դառնում է աղբեջանցի երեխաների ինքնազիտակցության բաղադրամաս, հիշողություն, կարծրատիպ, ինչը հաստատում է որոշակի արժեքներ: Այսպիսի հեքիաթներով ոչ թե հայրենասիրություն է քարոզվում, այլ տեղի է ունենում ազրեսիվ կարծրատիպերի եսկալացիա, ինչն անհնար է դարձնում թշնամանքի թուլացումը:

Վերոբերյալ երկու հեքիաթներում էլ, ինչպես տեսնում ենք, աղբեջանցիները ներկայացվում են գոհի կարգավիճակում: Եվ սա բնական է, որովհետև ազգային ինքնության կառույց չունեցող, ազգային հիշողություն ու անզիտակցական համակարգ, ազգային ուժեղ ինքնազիտակցությունից զուրկ վիճակագրական հանրույթի համար գոհի կարգավիճակի ենթագիտակցական որոնումը օրինացափ և ընդունելի է:

Անհանդուրժողականության ու ազգատյացության գաղափարներով է ներծծված նաև «Անմեղ կինը» հեքիաթը: Այստեղ բացասական կարծրատիպը խտացված է հայուիի Սիրանույշի կերպարում, ով իր նենգությամբ ու խորամանկությամբ չարաշահում է շահի վստահությունը: Սիրանույշին վերագրվում է լրտեսություն, խարդախություն, ըստ որում նա ներկայացվում է որպես Հայաստան աշխարհից ուղարկված: Այսինքն, այստեղ Հայաստանը ևս կարծրատիպացվում է որպես թշնամու երկիր ու թշնամական տարածք: Հոգեբանական պրոյեկցիան բավականին համապարփակ ձևով է արտահայտված աղբեջանական որոշ հեքիաթներում, որտեղ հայր շրջանառվում է որպես բացասական կերպար: Ազգայնամոլության սերմանման երկարատև քաղաքականությանը զուգահեռ ընթանում մանկական գրականության միջոցով թշնամի հայի կերպարի ձևավորումն ու զարգացումը:

Այս երեք հեքիաթներն ու հայատյացությամբ ներծծված ժամանակակից աղբեջանցի մանկագիրների բոլոր ստեղծագործությունները սերնդեսերունդ փոխանցվող բացասական մատրիցաներ են, որոնք խիստ բացասական տեղեկատվական նյութ են պարունակում: Այս երեք հեքիաթներն էլ ինֆորմատիվ են և նպատակին ճիշտ հասնելու գործընթաց ձևավորելու համար կատարում են նախանշված հայատյացության գործառույթը: Անտարակույս, այս երեք հեքիաթների մեջ էլ այս կամ այն չափով արտահայտված են աղբեջանցիների մտածողությունը, սոցիալական դիրքորոշումներն ու կարծրատիպերը: Մինչդեռ հեքիաթից է սկսվում երեխայի ծանոթությունը ոչ միայն գեղարվեստական աշխարհի, մարդկային փոխիհարաբերությունների, այլև շրջապատող աշխարհի հետ ընդհանրապես: Ի վերջո հեքիաթն ուղերձ է երեխայի ենթագիտակցական աշխարհ, որտեղից էլ ծրագրավորվում է նրա հասուն կյանքը: Արդյո՞ք աղբեջանական այսպիսի հեքիաթները իրենց ստերեոտիպացված լեզվով կարող են նպաստել մատադ սերնդի առողջ սոցիալականացմանը, և արդյո՞ք հեքիաթը որպես երեխայի զարգացման ամենամատչելի միջոց կարող է այսպիսի պարագաներում կատարել իր գործառույթը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բեյրության Մ., Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ, Դասախոսություններ: Գյումրի 2015 թ. էջ 38:
2. Կարապետյան Դ., Հայի կերպարն արդի աղբեջանական մանկական գրականության մեջ՝ընդհանուր ակնարկ, ԵՊՀ ՈՒԳՀ գիտական հոդվածների ժողովածու, 2015 թ. Տարեկան նատաշրջանի նյութեր, էջ 5
3. Տեպլով, Բ. Մ. Психологические вопросы художественного воспитания / Б.М. Теплов// Известия АПН РСФСР. – 1947. – вып. II, С. 7—26.

РЕЗЮМЕ
Стереотипный язык азербайджанских сказок
Лусине Караканян

Ключевые слова - фольклор, азербайджанская сказка, агрессивные стереотипы, эскалация стереотипов, подсознательный мир, интеграция психики, призыв, сообщение

С этимологической точки зрения основная необходимость пробуждения фольклора имеет цель сообщить что-то людям или вдохновить их, что, в свою очередь, также имеет миссионерский эффект. В этом смысле азербайджанские сказки способствуют формированию негативных стереотипов среди подрастающего поколения Азербайджана. Более того, они генеризируют межэтнические стереотипы. В статье представлены несколько азербайджанских сказок, в которых очевидна эскалация агрессивных стереотипов, то, что уже является кратчайшим путем осквернения и заблуждения поколения. Наблюдается влияние длительной политики шовинизма в формировании и развитии образа врага-армянина в детской литературе.

SUMMARY
The Stereotyped Language of Azerbaijani Tales
Lusine Karakhanyan

Key words: folklore, Azerbaijani tale, aggressive stereotypes, escalation of stereotypes, subconscious world, psychological integration, allocution, message.

Originally the main necessity survived by folklore has the purpose to inspire or inform something to people which, conditionally, has also missionary effects. In this case Azerbaijani tales support the formation of negative stereotypes among the youngest Azerbaijani generation. Moreover, they generate interethnic stereotypes.

In the article several Azerbaijani tales are presented, in which the escalation of aggressive stereotypes are evident, an event, which is actually a short way to defile and mislead the generation. The long term politics of insinuating nationalism is parallel to the formation and development of enemy Armenian image through children's literature.